

ցականներէն մէկն էր, երբ կաթողիկ եկեղեցւոյ պետը դարձաւ, ուղեց կէտ առ կէտ գործադրել այդ ժողովին որոշումները: Իր գլխաւոր մտատանջութիւնն էր, միջոցներ գտնել վերստին Հռոմի հնազանդեցնելու Լուտերի վերանորոգութեան հետեւանօք անկէ բաժնուածները: Սակայն բողոքականութիւնը տկարանալու ուէ միտում ցոյց չէր տար, ընդհակառակը օրէ օր աւելի կ'ամրանար և կը տարածուէր: Հետեաբար Գրիգոր ԺԳ. վերանորոգութեան շարժումը կասեցնելէ յուսահատ՝ իր ուշադրութիւնը դարձուց դէպի Արևելք, ուր կային ոչ-կաթողիկ քրիստոնեայ ազգեր, որոնք կրնային փոխարինել վերանորոգութեան պատճառած փլասները, եթէ յօժարէին Հռոմի հպատակիլ:

Ինքն համոզուած էր որ կրօնական բրորականտին ամենէն մեծ օժանդակն էր դպրոցը, ուստի հաստատեց Յունաց, Հրեաներու, Արաբներու, Հունգարացիներու և Մարոնիներու յատուկ վարժարաններ:

Որոշուած էր նաև բանալ՝ անոնց կից Հայոց յատուկ վարժարան մը: Գրիգոր ԺԳ. 1584ին այս որոշումը կը հաղորդէր կոնդակով մը որուն մէջ հիացում կը յայտնէր Հայոց տոկուն նկարագրին համար, առանց մոռնալու իր ափսոսանքը յայտ-